

**ԳԵՐՄԱՆԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՆՊԱՍՏ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1933-1939 ԹԹ.**

Բանալի բառեր – Գերմանա-հայկական ընկերություն, ազգայնական-սոցիալիստ, Ադուլֆ Հիտլեր, ռասա, հրեա, արիացի, Պ. Ռոհրբախ, Ա. Աբեղյան, Է. Շթիր, Ռ. Շեֆեր, Ընդհանուր ժողով, սեմական ժողովուրդներ, Պ. Ֆրունջյան, «Հայկականություն-արիականություն»

1933 թ. Ազգայնական-սոցիալիստական գերմանական բանվորական կուսակցության հաղթանակով և Ադուլֆ Հիտլերի կողմից իշխանության գրավմամբ Գերմանիայում ռասայական հարցը դարձավ առանցքային: Այդ կուսակցության «գիտական» հրապարակախոսության ներկայացուցիչներն «արիական ցեղը» հակադրում էին «հրեական ցեղին» և մարդկության «բարձր, իրական քաղաքակրթությունը» հռչակում առաջինի ստեղծագործության արդյունք: «Մեզ համար ցաւալին այն էր սակայն, որ հայութեան անունն եւս խառնողներ եղան հրեականին հետ, երկու ժողովուրդները մարդաբանօրէն ազգակցութեան մէջ դնելով իրարու հետ»¹, – հարցի առնչությամբ գրում էր Գերմանա-հայկական ընկերության (այսուհետև՝ ԳՀԸ) քարտուղար դր. Արտաշէս Աբեղյանը:

Հիրավի, Գերմանիայում ազգայնական-սոցիալիստների իշխանության գլուխ անցնելուց հետո հակահրեական շարժմանը զուգահեռ ծավալում ստացավ նաև հակահայ շարժումը²: Գերմանական մամուլի էջերում մեկը մյուսի ետևից տպագրվում էին հոդվածներ, որոնցում հայերն ու հրեաները, դրվելով կշեռքի միևնույն նժարին, ներկայացվում էին իբրև սեմական ժողովուրդ, որը ծանրակշիռ ներդրում է ունեցել ցարական վարչակարգի տապալման և ռուսական բոլշևիկյան հեղափոխության ծավալման ու արմատացման գործում³: Ի պաշտպանություն այդ տեսակետի՝ վկայակոչվում էին զանազան ընդհանուր հատկանիշներ և նույնիսկ երկու ժողովուրդների պատմական ճակատագրի միանմանությունը⁴: Մարտին Շթիմլերը, օրինակ,

¹ Աբեղյան Ա., Հայութիին-արիականութիին (Armeniertum-Ariertum) // «Հայրենիք», 1934, թիվ 8, էջ 154:

² Տե՛ս Բախչինյան Հ., Արտաշէս Աբեղյանի կյանքի ժամանակը // «Գարուն», 1995, թիվ 7, էջ 67:

³ Տե՛ս «Հայկականութիին-արիականութիին», գերմաներենից թարգմանեց՝ Տոնոյան Ա., Երևան, 2001, էջ 11:

⁴ Տե՛ս Հայրունի Ա., Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Երևան, 2002, էջ 462:

հայերին և հրեաներին դասելով «առաջավորասիական» (ոչ արիական) ժողովուրդների շարքում, ի հիմնավորումն այդ տեսակետի, ընդգծում էր հայերի՝ հրեաների նման «տառայալ» ժողովուրդ լինելու հանգամանքը, վկայակոչում «հին» ու «մաշված» արտահայտություններ: Օրինակ՝ նա գրում էր. «Անառարկելի իրողությունն է նաև այն, որ ինչպես Բալկաններում են ասում, «մեկ հայը յոթ հրեա արժե՝ ցույց տալու համար, որ հրեաներին բնորոշ որոշ առանձնահատկություններ հայերի մոտ ավելի ցայտուն են արտահայտված»¹: Նույնօրինակ վկայակոչումներով հայերի և հրեաների նույնականության դիրքերից էին արտահայտվում նաև Հանս Գյունթերը, Ֆելիքս ֆոն Լուշանը, Սամուել Վայսենբերգն ու Հիտլերի ռասիստական գաղափարներով առաջնորդվող՝ գերմանացի Բազմաթիվ ազգաբաններ ու հրապարակագիրներ²: Հավելենք, որ ԳՀԸ-ի նախագահ Պաուլ Ռոհրբախը, որն իր հուշերում համառոտ անդրադարձ է կատարում այս թեմային, տեղեկացնում է, որ ազգայնական-սոցիալիստները ծրագրել էին «ռասայական հիմունքներով աստիճանագրվել» ոչ միայն Գերմանիայում ապրող զտարյուն հայերին (այն է՝ նրանց ընդգրկել ոչ արիական՝ ստորակարգ ժողովուրդների ցուցակում), այլև նույնիսկ գերմանացիների և հայերի խառնամուսնություններից ծնվածներին³:

Ի լրումն վերոնշյալի՝ նշենք նաև, որ Գերմանիայում ծավալում ստացած և հետզհետե ուժգնացող հակահայ այդ շարժման մեջ մեծ դեր էին կատարում Անկարայից գործուղված և նացիստների կողմից քաղաքական նկատառումներով գրկաբաց ընդունվող թուրք գործակալները: «Նացի Գերմանիոյ թուրքասիրութեան և հայատեսցութեան ամենէն պերճախօս վկայութիւնն էր անշուշտ շանսատակ Թալէաթի Պերլին թողուած ոսկորներուն հանդիսաւոր առաքումը Թուրքիա»⁴, – խնդրո առարկա հարցին իր կատարած անդրադարձում նշում էր Հայ հեղափոխական դաշնակցության (ՀՅԴ)՝ Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» ամսագիրը (1975 թ. մարտի 16):

Եթե հաշվի առնենք հրեա ժողովրդի նկատմամբ նացիստների ռասայական քաղաքականության ողբերգական հետևանքները, ապա դժվար չէ կռահել, թե ինչ մեծ սպառնալիք էր գոյանում հայերի դեմ, որոնց նրանք վերագրում էին սեմական ծագում և համարում բոլշևիկյան հեղափոխության ռահվիրաներ: Հայերի դեմ պատրաստվում էր մի նոր եղեռն, հրեաների նման նրանք դատապարտվում էին ոչնչացման: «Պղտոր աղբյուրներից (թուրքական – Հ. Մ.), – գրում է դր. Ա. Աբեղյանը, – հայութեան մասին տարածուած

¹ Meißner A., Martin Rades “Christliche Welt” und Armenien. Bausteine für eine internationale Ethik des Protestantismus, Band 22, Berlin, 2010, S. 287.

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս Rohrbach P., Um das Teufels Handschrift. Zwei Menschenalter erlebter Weltgeschichte, Hamburg, 1953, S. 470:

⁴ Տե՛ս Բախչինյան Հ., նշվ. աշխ., էջ 67:

տեղեկությունները անշուշտ չպիտի սահմանափակուէին տեսականի շրջանակներում–նրանք արդէն իսկ սկսել էին ժանտ պտտուներ տալ–եթէ Գերմանեւ-հայ ընկերութեան կողմից արագ և շրջահայեաց քայլեր չառնուէին»¹:

Գերմանական մամուլի էջերում հայերի վերաբերյալ շրջանառու մուլար տեսակետները հերքելու առաջադրությամբ ԳՀԸ-ն այդ ժամանակաշրջանում ձեռնամուխ եղավ հրապարակախոսական լայն գործունէության: Նրա նախաձեռնությամբ կարճ ժամանակամիջոցում հրապարակ հանվեցին արիական ռասային հայերի պատկանելության, «ժողովուրդների ընտանիքում նրանց տեղի», Գերմանիայի հետ նրանց ունեցած մշակութային շփումների վերաբերյալ ծավալուն ուսումնասիրություններ՝ ներկայացնելով գերագանցապես այն գիտնականների տեսակետները, որոնք հիմնավորում էին ոչ միայն հնդգերմանական (այն է՝ հնդեվրոպական) լեզվաընտանիքին հայերենի պատկանելությունը, այլև այդ «մշակութային բազմազանության» մեջ մտնող ժողովուրդների հետ հայ ժողովրդի ազգակցությունը²:

Բացի այդ՝ 1933 թ. մայիսի 31-ին ԳՀԸ-ն միջնորդություն ներկայացրեց Գերմանիայի բարձրագույն իշխանություններին՝ խնդրելով հայերի ռասայական պատկանելության վերաբերյալ արդարացի վճիռ արձակել: Այդ դիմումն անարձագանք չմնաց: Ընկերության փոխնախագահ Էվալդ Շթիբին հասցեագրված՝ օգոստոսի 31-ի պատասխան նամակում Գերմանիայի ներքին գործերի նախարարության՝ ռասաների հետազոտման փորձագետը տեղեկացնում էր, որ ներքին գործերի նախարարի 1933 թ. հուլիսի 31-ի հրամանագրով (Nr. IC 6071/26.6) հայերը, «մասնագիտական ծառայության վերականգնման օրէնքին» համապատասխան, դասվում են արիական ժողովուրդների շարքում³:

Այսպիսով, ԳՀԸ-ի նախաձեռնած պայքարը, որում, ի դեպ, ներգրավված էին նաև «Դր. Լեփսիուսի գերմանական առաքելություն Արևելքում» կազմակերպությունը, ինչպես նաև գիտական, կրոնական ու քաղաքական մի շարք համբավավոր գործիչներ (պրոֆ. Կարլ Ֆրիդրիխ Լեհման-Հաուպտ, պրոֆ. Յուլիուս Ռիխթեր, Սաքսոնիայի դուքս պրոֆ. Ֆոն Մաքս, Յոհաննես ֆոն Լերս և այլք), հասավ իր ցանկալի նպատակին⁴. գերմանական մամուլում հակահայ հողվածները դադարեցին, և հայ անունը (Armenier) արիական ժողովուրդների անվանացանկի մեջ այբբենական կարգով առաջին տեղը գրավեց: Այդ ցանկը բաժանվեց ոստիկաններին, և Գերմանիայի ներքին

¹ Աբեղեան Ա., նշվ. աշխ., էջ 154:

² Stier E., Zur Geschichte der Deutsch-Armenischen Gesellschaft (1914-1939) // "Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft" (Berlin) (այլուհետև՝ MDAG), 1939, Dezember, n° 5-6, S. 11 (75):

³ Stier u. Der Sachverständige für Rassenforschung beim Reichsminister des Inneren an die Deutsch-Armenischen Gesellschaft z. Hd. Herrn Kirchenrat D. E. Stier Jeßnitz (Anhalt) // MDAG, 1938, April, n° 2, S. 15 (31)-16 (32):

⁴ Stier u. Հայրունի Ա., Պատու Ռոհրբախը և Հայաստանը // «ՎԷՄ», 2011, թիվ 4, էջ 135-136:

գործերի նախարարության հրամանով հայերին՝ որպես արիացիների, տրվեցին հատուկ վկայագրեր¹: Այն բանից հետո, երբ 1938 թ. Ավստրիան միացվեց Գերմանիային, և այնտեղ ևս սկսեցին գործել նացիստական ռասայական օրենքները, ԳՀԸ-ի միջնորդությամբ այդպիսի վկայագրեր ստացան նաև այնտեղ բնակվող հայերը²:

Այսուհանդերձ, հայ ժողովրդի մասին գիտականորեն հիմնավորված և ստույգ տեղեկությունները գերմանացի ընթեցողների լայն շրջաններին հասնելի դարձնելու և հետագայում նոր կեղծիքներից ու նենգափոխումներից խուսափելու նպատակով ԳՀԸ-ն որոշեց հայերի արիական ծագման վերաբերյալ մի առանձին գիրք հրատարակել՝ հայտնի հայագետների աշխատակցությամբ: Այն հրապարակ հանվեց 1934 թ. սկզբին և կրում էր «Հայկականություն-արիականություն»³ վերնագիրը:

Ժողովածուի առաջին հոդվածը՝ «Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շարքում», պատկանում է Բեռլինի համալսարանի պրոֆ. Հանս Հայնրիխ Շայդերի գրչին: Հեղինակը հայ ժողովրդին «լեզվով, կրոնով ու մշակույթով» ազգակից է համարում գերմանացիներին: Նա հայկական ու գոթական դպրությունների ծագումը ևս համարում է պատմական հար և նման պայմանների արդյունք: Այս երկուսի միջև կապը նա սերտ է համարում այն պատճառով, որ գերմաներենի հնագույն գրավոր սկզբնաղբյուրի՝ Աստվածաշնչի գոթերեն թարգմանությունը կատարել է Վուլֆիլան, մի մարդ, որը ծագում էր Հայաստանին դրացի Կապադովկիայի քրիստոնյա մի ընտանիքից: Հեղինակը սրանով է պայմանավորում Աստվածաշնչի գոթերեն թարգմանության մեջ հայերենի հետքերի առկայությունը:

Հ. Հ. Շայդերը հայերենի ու գերմաներենի հնչյունական օրենքների մեջ ևս ազգակցություն է տեսնում: Նրա համոզմամբ՝ հայերենի այբուբենը հնչյունների նրբությամբ ու որոշակիությամբ գերազանցում է եվրոպական ազգերից շատերի այբուբեններին: Նա հայ հանճարի արդյունք է համարում նաև վրաց և աղվանից այբուբենները, մեծ արժեք է տալիս հին և նոր գրականության ու գիտության ասպարեզում հայերի ներդրումներին:

Ժողովածուի երկրորդ հոդվածը պատկանում է պրոֆ. Յոհ. ֆոն Լերսի գրչին և կրում է «Հայկականություն-արիականություն» վերնագիրը: Հեղինակը սրբագրում է գերմանացի մի շարք ազգաբանների ու հրապարակա-

¹ Տե՛ս **Բախչինյան Հ.**, նշվ. աշխ., էջ 68:

² Տե՛ս *Der Vorstand der Deutsch-Armenischen Gesellschaft* (Dr. P. Rohrbach, Dr. A. Abegian) an die in Osterreich ansässigen Armenier // MDAG, 1938, April, n° 2, S. 15 (31): Պ. Ռոհրբախն իր հուշերում գրում է, որ ԱՄՆ-ում քաղաքացիության իրավունք ստանալու համար դիմած մի հայի՝ այդ երկրի բարձրագույն իշխանություններին ներկայացված դիմումի համաձայն՝ Օքլենդ քաղաքի դատարաններից մեկում կազմակերպված դատական նիստին իբրև փորձագետ հրավիրվել է նաև ինքը՝ պարզաբանելու համար, թե հայերը պատկանում են արդյոք «սպիտակ» ռասային, թե ոչ: Տե՛ս **Rohrbach P.**, նշվ. աշխ., էջ 278:

³ *Armeniertum-Ariertum*, hg. von der Deutsch-Armenischen Gesellschaft Berlin, Potsdam, 1934.

գիրների այն թյուր կարծիքը, թե հայերը ազգակից են հրեաներին և ունեն վերջիններիս բարոյական նկարագիրը: Հողվածի վերնագրից արդեն իսկ պարզվում է հեղինակի հիմնական տեսակետը, այն է՝ «հայերը արիական ժողովուրդ են»¹: Ըստ նրա՝ հայ ժողովրդի ողբերգությունը մեծ մասամբ հետևանք է հենց այն բանի, որ նա իր ամբողջ պատմության ընթացքում, որպես արիական ժողովուրդ, հարկադրված է եղել իր արիական մշակույթն ու նկարագիրը պաշտպանել աշխարհաքաղաքական այնպիսի մի տարածքում, որտեղ միմյանց են բախվում սեմիտականությունը, մոնղոլականությունն ու ուրալականությունը (այն է՝ ուգրո-ֆիննականը):

Ժողովածուի երրորդ հոդվածը՝ «Հյուսիսային տիպերը Հայաստանում», պատկանում է դր. Ա. Աբեղյանի գրչին: Հիմք ընդունելով հնագիտական պեղումների արդյունքները, հայոց հին և նոր առասպելներն ու ժողովրդական երգերը, ազգաբանական նյութերը, ճանապարհորդների ու այլոց դիտողությունները՝ հողվածագիրը եզրակացնում է, որ արդի հայության մեջ ևս որոշակի տոկոսային հարաբերությամբ ներկայացված է հյուսիսատիպ ռասան: Վկայակոչելով գիտության մեջ հայտնի այն տեսակետը, որ արմենները ոչ միայն իրենց լեզվով, այլև մարդաբանորեն ազգակից են հին փռուգիացիներին ու թրակիացիներին, դր. Ա. Աբեղյանը նշում է, որ վերջին երկուսի հյուսիսային ռասա լինելը վաղուց ընդունվել է գիտության կողմից²:

Հաջորդը Մյունխենի համալսարանի գիտնականներից դր. Կարլ Ռոթի «Հայ ժողովրդի ռասայագիտության և նկարագրի մասին» վերնագիրը կրող հոդվածն է: Հեղինակը նշում է, որ քիչ ժողովուրդներ կան, որոնց մասին հասարակական կարծիքներում այնքան շատ կանխակալություն և, դրա հետ մեկտեղ, այնքան աղտոտ պատկերացումներ լինեն, որքան հայերի: Ըստ նրա՝ ով ցանկանում է հայերի մասին ճշմարիտ և արդար կարծիք կազմել, պարտավոր է նախ և առաջ հայոց պատմությունն ուսումնասիրել:

Հինգերորդը քահանա Գերհարդ Քլինգեի հոդվածն է՝ «Հայ ժողովրդի ռասան և պատմությունը որպես հիմնախնդիր» վերնագրով, որտեղ նա անդրադարձ է կատարում ոչ միայն հայ ժողովրդի ծագմանը, այլև պատմությանն ու մշակույթին: Մոռացության չի մատնված նաև Հայաստանի աշխարհագրական դիրքը: Հեղինակի հիմնական եզրակացությունն այն է, որ դեռևս քրիստոնեության ընդունումից առաջ հայերը շատ մեծ ազդեցություն են ունեցել մշակութային կյանքի վրա:

Է. Շթիրը, որ մոտիկից ծանոթ էր Հայաստանին ու հայ ժողովրդին, ժողովածուում զետեղել է «Գերմանա-հայկական մշակութային առնչություններ» հոդվածը: Սկսելով խաչակիրների ժամանակաշրջանից՝ նա հատկապես կարևորում է հայ մշակույթի պատմության մեջ Դորպատի դերը: Գեր-

¹ Տե՛ս «Հայկականություն-արիականություն», էջ 28:

² Տե՛ս նույն տեղում, էջ 30-38:

մանական համալսարաններում ուսանած հայ գործիչների՝ գերմանա-հայկական մշակութային հարաբերությունների զարգացման գործում դերը ևս անտեսված չէ:

Վիեննայի համալսարանի պրոֆ. Յոզեֆ Ստրոժիգովսկին այդ ժողովածուի մեջ զետեղած «Հայերը որպես հնդգերմանական ճարտարապետության մտածողության կրողներ» հոդվածում գտնում է, որ հայ ժողովուրդը ոչ միայն լեզվով ու մշակութային, այլև իր ճարտարապետությամբ արիական ստեղծագործ ռասայի հարազատ ու բնիկ ներկայացուցիչներից է և շատ կողմերով մոտ է գերմաններին: Հեղինակը մեր երկիրը անվանում է «հնդեվրոպական ճարտարապետության միջնաշխարհ»:

Ժողովածուի հաջորդ հոդվածը՝ «Հայոց բարեպաշտությունը», պատկանում է Ֆրայբուրգի համալսարանի (Շվեյցարիա) պրոֆ. Ֆոն Մաքսի գրչին, որը գիտականորեն արժեքավոր չէ, այն ընդամենը ընթերցողին ծանոթացնում է հայ ժողովրդի կրոնասեր ոգուն:

Ռիխարդ Շեֆերը՝ ԳՀԸ-ի գլխավոր քարտուղարն ու հանգուցյալ դր. Յոհաննես Լեվիսիուսի երկարամյա գործընկերը, իր «Արևմտյան մշակութային աշխարհն ու հայերը» հոդվածում ընդգծում է Արևելքից սպառնացող բոլշևիզմի դեմ իրենց՝ գերմանացիներին, «հոգով ու տեսակով ազգակից» հայ ժողովրդի հետ պայքարի անհրաժեշտությունը: Նա գերմանական իշխանություններին կոչ է անում այդ ժողովրդին ցուցաբերել ամեն տեսակի օժանդակություն: «Մեր ազգի (գերմանացիների – Հ. Մ.) բարեփոխման ուղղությամբ մենք պետք է դեռ բավական ուժ ներդնենք, որպեսզի մահացող մշակութային ժողովրդին կրկին օգնենք ոտքի կանգնելու: Մենք մտածում ենք ոչ թե տարածքների քաղաքական բաժանման, այլ՝ համանման հոգևոր վերելքի մասին, քանի որ, ի վերջո, երկրի տարածքները մշակութային տոկուն ժողովրդին են բաժին ընկնում: ... Ասվածից պետք է կռահել, որ այնպիսի մի ընկերություն, ինչպիսին այսօր Գերմանա-հայկականն է, ակներևաբար կարևոր առաջադրանք ունի, որի կատարումը հնարավոր կդառնա միայն այն դեպքում, եթե բարի մարդիկ միանան դրան»¹, – գրում է Ռ. Շեֆերը:

Վերջապես, դր. Պ. Ռոհրբախը «Մի ավելորդ հարց» վերնագրով հոդվածում այնչափ ակներև իրողություն է համարում հայ ժողովրդի արիացեղ լինելը, «ավելորդ հարց» է համարում այն կասկածի տակ դնելը կամ վիճելի համարելը: «Հագցրե՛ք դուք, օրինակ, բավարացի լեռնականին մի փոքրասիացու հագուստ, և դուք կտեսնեք, որ տարբերություն չկա նրա և Վանի կամ Տավրոսի կողմերում ապրող հայ շինականի կամ հովվի միջև»², – գրում է նա:

Նշված հոդվածներից բացի՝ ժողովածուի վերջում ներկայացված են քաղվածքներ Յոզեֆ Մարկվարտի, Հայնրիխ Հյուբշմանի, Ֆրանց Նիկոլաուս

¹ Նույն տեղում, էջ 88-89:

² Նույն տեղում, էջ 90:

Ֆինկի, Կարլ Ֆրիդրիխ Նոյմանի, կոմս Ավգուստ ֆոն Հաքստհաուզնի, Մորից Վագների, Ֆրիդրիխ Բողենշտեդտի, Յոհ. Լեփսիուսի և Ֆրիտյոֆ Նանսենի՝ հայերի ու Հայաստանի մասին գրվածքներից:

«Հայկականություն-արիականություն» ժողովածուն տպագրվեց Գերմանիայում ապրող մի քանի հայերի, նախ և առաջ՝ ԳՀԸ-ի նախկին գանձապահ Հաննես Իփլիքջյանի նյութական հովանավորությամբ: Այն լույս տեսավ 3000 օրինակով և ուղարկվեց Գերմանիայի բոլոր առաջատար թերթերի ու հանդեսների խմբագրություններ, գիտության ու մշակույթի գործիչների: «Յուսանք,– գրում էր դր. Ա. Աբեդյանը նշված ժողովածուի վերաբերյալ,– որ լիովին կկատարե իրեն վերապահուած դերը»¹:

Անշուշտ, դր. Ա. Աբեդյանի հույսերն ապարդյուն չանցան, և ժողովածուն, որի արժանիքներն այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը, Գերմանիայում նացիոնալ-սոցիալիստների իշխանության տարիներին հայության համար ունեցավ անգնահատելի քաղաքական նշանակություն²:

Ինչևէ, նշենք, որ 1928 թ. «Mitteilungen der Deutsch-Armenischen Gesellschaft e. V. Berlin» պարբերականի երկրորդ՝ նոյեմբերի համարի լույսընծայումից հետո ԳՀԸ-ն դադարեցրել էր իր այդ օրգանի տպագրությունը: 1933 թ. ընկերությունը վերականգնեց դրա հրատարակությունը՝ իր անդամների հետ հարողակցությունն ապահվելու նպատակով³:

1933 թ. փոփոխվեց ԳՀԸ-ի վարչության կազմը: Մայիսի 11-ի ընդհանուր ժողովում ընկերության փոխնախագահի պաշտոնում ընտրվեց դր. Ա. Աբեդյանը⁴՝ փոխարինելով դր. Ջեյմս Գրինֆիլդին, որը փոքր-ինչ առաջ վերադարձել էր իր ծննդավայր Պարսկաստան⁵: «Իր պարսկական հայրենիք մեկնելուց

¹ Աբեդեան Ա., նշվ. աշխ., էջ 156:

² Տե՛ս Հայրունի Ա., Պատու Ռոհրբախը և Հայաստանը, էջ 136: Երբ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ հայտնի չէր, թե «ինչ մութ հաշիւներով եւ դրոյումներով» հայերի արիական ծագումը դարձյալ կասկածի տակ դրվեց, 1942-1943 թթ. Ա. Աբեդյանը կարողացավ Շտուտգարտում դարձյալ հրապարակ հանել «Հայկականություն-արիականություն» ժողովածուն, որը վերջնականապէս փրկության խարիսխ նետեց պատերազմի ընթացքում Գերմանիայի գրված տարածքներում ապրող շուրջ 500 000 հայությանը: «Հոս հարցնել հարկաւոր է,– «Հայրենիք» ամսագրում 1955 թ. հունիսի 10-ին տպագրված իր հոդվածում գրում էր դեպքերի ականատես Մանասե Սևակը,– թե ի՞նչ պիտի ըլլար այս կէս միլիոն հայերուն ճակատագիրը, եթէ նախախնամական դեր մը կատարած չըլլար պրոֆ. Աբեդեան, տոքթ. Ռորպախի հետ խեղդելով այդ հակահայ և թրջական ոխերիմ շարժումը իր օրրանին մէջ»: Տե՛ս Բախչիկյան Հ., նշվ. աշխ., էջ 68:

³ Տե՛ս Stier E., նշվ. աշխ., էջ 11 (75): Նշված պարբերականը, որի մասին մենք տեղեկանում ենք Է. Շթիրի հաղորդումից, արխիվներում մեզ չհաջողվեց գտնել:

⁴ 1933 թ. ԳՀԸ-ի վարչությունը ներկայանում էր հետևյալ կազմով՝ Պ. Ռոհրբախ (նախագահ), Է. Շթիր (փոխնախագահ), Ա. Աբեդյան (փոխնախագահ), Ռ. Շեֆեր (քարտուղար), Դետլոֆ Ֆոգտ (գանձապահ):

⁵ Տե՛ս Stier E., նշվ. աշխ., էջ 11 (75): Ջ. Գրինֆիլդը վախճանվեց 1939 թ. հոկտեմբերի 21-ին Թեհրանում: Տե՛ս Stier E., James Greenfield † // MDAG, 1939, Dezember, n° 5-6, S. 20 (84): Բռնկված Երկրորդ համաշխարհային պատերազմի պատճառով կես տարի ուշացումով՝ 1940

հետո,– Ջ. Գրինֆիլդի վերաբերյալ գրում է Է. Շթիրը,– մենք նրան լիովին կորցրինք: Դր. Գրինֆիլդը դր. Լեփսիուսի հետ մեկտեղ մեր ընկերության հիմնադիրն էր ու հոգին: Առանց նրա իմաստուն խորհուրդների, բազմակողմանի կապերի և նվիրական ջանքերի մեր ընկերությունը չէր կարող հասնել իր ձեռք բերած հաջողությունների նույնիսկ կեսին»¹:

ԳՀԸ-ի համար մեծ կորուստ էր նաև 1934 թ. Ն. Իփլիքյանի անսպասելի վախճանը: Ընկերության նախաձեռնությամբ՝ ապրիլի 14-ին մատուցվեց հանգուցյալի հիշատակին նվիրված Սուրբ պատարագ²: «Նա (Ն. Իփլիքյանը – Ն. Ս.),– գրում է Է. Շթիրը,– ինչպես նաև նրա քեռին՝ Ավետիքյանը, մշտապես պատրաստ էին աջակցել մեր (ԳՀԸ-ի – Ն. Ս.) նպատակներին»³:

Ինչևէ, 1930-ական թթ. կեսերին, երբ ԳՀԸ-ի՝ հայերի արիական ծագման ապացուցմանը միտող պայքարը հասել էր իր նպատակին, կազմակերպությունը վերադարձավ իր ավանդական՝ գերմանա-հայկական մշակույթային կապերի սերտացման, գործունեության շրջանակների ընդլայնման աշխատանքներին՝ համընթաց շարունակելով հայերի արիական պատկանելությունը հիմնավորող գիտական հրապարակումները: Այդ ժամանակաշրջանում նրա թերևս ամենահիշարժան նախաձեռնությունը Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակի առիթով կազմակերպած փառատոնն էր, որի բացումը տեղի ունեցավ 1936 թ. հոկտեմբերի 20-ին Բեռլինում, և որի ժամանակ պրոֆ. Ն. Ն. Շայդերը հանդես եկավ Աստվածաշնչի հայերեն թարգմանության պատմական նշանակությունը ներկայացնող զեկուցումով: Այդ միջոցառման շրջանակներում Ա. Աբեղյանի, Ռ. Շեֆերի, Գ. Քլինգերի, Գ. Շնայդերի և Պ. Ռոհրբախի մասնակցությամբ՝ հայ բազմադարյան գիր ու գրականության և մշակույթի վերաբերյալ քննարկումները շարունակվեցին ամբողջ ձմռան ընթացքում⁴:

1937 թ. ԳՀԸ-ի վարչությունը ուներ հետևյալ կազմը՝ Պ. Ռոհրբախ (նախագահ), Ա. Աբեղյան (փոխնախագահ), Է. Շթիր (փոխնախագահ), Դետլոֆ Տոգտ (գանձապահ), Պետրոս Ֆրունջյան (հայ քարտուղար), Ռ. Շեֆեր (գերմանացի քարտուղար)⁵:

1938 թ. նախատեսվում էր վարչությունում նոր փոփոխություն կատարել, սակայն ընկերության տարեկան Ընդհանուր ժողովի հրավիրումը շարունակ հետաձգվում էր նրա նախագահ Պ. Ռոհրբախի՝ Աֆրիկայում գտնվելու պատճառով: Ի վերջո, ժողովը հրավիրվեց հոկտեմբերի 10-ին: Այն ընտ-

թ. մարտի 17-ին, ԳՀԸ-ի նախաձեռնությամբ տեղի ունեցավ հանգուցյալի հիշատակին նվիրված հանդիսավոր միջոցառում: Տե՛ս **Schäfer R.**, Aus der Deutsch-Armenischen Gesellschaft // MDAG, 1940, Mai, n° 7-8, S. (109) 21:

¹ Տե՛ս **Stier E.**, Zur Geschichte der Deutsch-Armenischen Gesellschaft (1914-1939), S. 11 (75):

² Տե՛ս նույն տեղում, էջ 12 (76):

³ Նույն տեղում, էջ 11 (75)-12 (76):

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 12 (76):

⁵ Տե՛ս Der Vorstand der Gesellschaft // MDAG, 1937, November, n° 1, S. 16:

րեց գերմանացի անդամներից բաղկացած գործադիր վարչություն, որին լիազորեց կազմակերպել լրացուցիչ ընտրություն՝ վարչությունը հայ անդամներով համալրելու համար (ընտրությունը պետք է կատարվեր վարչության՝ Բեռլինի «Հայ գաղութային միության» ներկայացուցչի և գերմանացի վերատեսուչների կողմից ներկայացված թեկնածուներից):

Վարչության հայ անդամների ընտրությունը կայացավ 1938 թ. դեկտեմբերի 3-ին գործադիր վարչության հրավիրած նիստում: Նշված երկու ընտրությունների վերջնարդյունքում ձևավորվեց ԳՀՀ-ի՝ գերմանացի ու հայ անդամներից բաղկացած վարչությունը¹, որի կազմում ընդգրկվեցին Պ. Ռոհրբախը (նախագահ), Է. Շթիրը (փոխնախագահ), Ա. Արեղյանը (փոխնախագահ), Դ. Ֆոգտը (գանձապահ), Ռ. Շեֆերը (գերմանացի քարտուղար), Պ. Ֆրունջյանը (հայ քարտուղար), Արիս Չալթյանը, Դավիթ Դավիթխանյանը, դր. Գ. Տեր-Հարությունյանը, պրոֆ. Հ. Հ Շայդերը, քահանա Գ. Քլինգեն, Ալիսե Լեփսիուսը, Գերտրուդ Հեթցելը, դր. Յ. Իփլիքչյանը, դր. Ս. Տեր-Օհանեայանը, ինժեներներ Արա Սալայանն ու Արամ Տեր-Մինասյանը, Շավարշ Հարությունյանն ու Ա. Վամպուշը (վերատեսուչներ)²:

1939 թ. հունվարին Վիեննայի «Երիտասարդ հայերի մշակութային միության» և տեղի հայ գաղթօջախի ներկայացուցիչների հրավերով Պ. Ռոհրբախը ուղևորվեց Ավստրիայի (Օստմարկ) մայրաքաղաք Վիեննա: Նրան ուղեկցում էր ԳՀՀ-ի հայ քարտուղար Պ. Ֆրունջյանը: Հունվարի 21-ին հյուրերը հանդիպում ունեցան նշված միության վարչության անդամների հետ: Այնտեղ քննարկվեց ԳՀՀ-ի ու այդ կազմակերպության ապագա համագործակցության հարցը: Ժամը 17:00-ին դրան հաջորդեց մամուլի ներկայացուցիչների հետ հանդիպումը, որին ներկա էր Վիեննայի «Գերմանական կրթության քարոզչության գրասենյակ»-ի ղեկավարը: Երեկոն եզրափակվեց «Երիտասարդ հայերի մշակութային միություն»-ում կազմակերպված՝ նորաստեղծ «Կոմիտասի երգչախմբի» համերգով:

Հաջորդ օրը՝ հունվարի 22-ին, Վիեննայի հայկական մատուռում մատուցված պատարագին մասնակցելուց հետո, հյուրերը հանդիպում ունեցան հայոց եկեղեցու՝ տեղի ներկայացուցիչների, Վիեննայի հայ հոգևոր համայնքի առաջնորդի հետ և այցելեցին Մխիթարյաններին: Երեկոյան ժամը 19:30-ին, Վիեննայի «Ուրանիա» հյուրանոցի դիմաց Պ. Ռոհրբախը հանդես եկավ հրապարակային զեկուցումով, որին ներկա էին տեղի հայ գաղթօջախի ներկայացուցիչները, պետական ու քաղաքական այրեր, ինչպես նաև՝ Վիեննայում ապրող գերմանացի հայագետներից ոմանք: Զեկուցման ավարտից հետո «Իմպերիալ» հյուրանոցում հյուրերն արժանացան հանդիսավոր ընդու-

¹ St' u Schäfer R., Aus der Deutsch-Armenischen Gesellschaft // MDAG, 1939, April, n° 4, S. 14 (62)-15 (63):

² St' u Der Vorstand der Gesellschaft // Նույն տեղում, էջ 16 (64):

նելության, և Վիեննայի «Երիտասարդ հայերի մշակութային միություն»-ը Պ. Ռոհրբախին ճանաչեց իր պատվավոր անդամ:

Պ. Ռոհրբախի Վիեննա այցելության արդյունքներից մեկը եղավ այն, որ պաշտոնական “Wiener Zeitung” թերթի էջերում մեկ շաբաթվա ընթացքում տպագրվեց Հայաստանին նվիրված երեք հոդված¹: Այցը կարևոր նշանակություն ունեցավ նաև ԳՀԸ-ի անդամների թվաքանակի ընդլայնման առումով: Ընկերությանն իրենց անդամակցությունը հայտնեցին Վիեննայի մշակութային միության և տեղի հայ գաղթօջախի ներկայացուցիչներից շատերը² (1938 թ. ԳՀԸ-ն ուներ 106, իսկ 1939 թ.՝ 128 անդամ³):

Ի վերջո, 1939 թ. փետրվարի 8-ին տեղի ունեցավ ԳՀԸ-ի նորընտիր վարչության ընդհանուր ժողովը: Այնտեղ Դ. Ֆոգտը հաշվետվություն ներկայացրեց իրենց կազմակերպության՝ 1938 թ. եկամուտների վերաբերյալ: Նիստում հաղորդում տրվեց նաև այն մասին, որ ավելի քան 15 տարի տևած հապաղումից հետո ի վերջո տպագրվելու էր ԳՀԸ-ի նախկին անդամներից մեկի՝ հանգուցյալ Տիրան Մեստուջյանի՝ «Հայաստանի հնագույն շրջանի պատմությունը մինչև Արշակունիներ» վերնագրով աշխատությունը: Այն մաս առ մաս՝ հոդվածների տեսքով, նախ տպագրվելու էր Վիեննայի Մխիթայանների «Հանդես ամսօրեայ» պարբերականում, ապա լույս էր ընծայվելու առանձին գրքով⁴:

Զմոռանանք, որ 1939 թ. հոբեյանական տարի էր ԳՀԸ-ի համար: Նրա վարչությունը պատրաստվում էր նոյեմբերին մեծ շուքով տոնելու ընկերության հիմնադրման 25-ամյակը: Այդ նպատակով մայիսի 22-ին այն ստեղծեց 10 անդամներից բաղկացած մի հանձնաժողով, որը պետք է կազմակերպեր միջոցառման նախապատրաստական աշխատանքները: Մինչև Երկրորդ աշխարհամարտի բռնկումը հանձնաժողովը հասցրեց նախագծի շուրջ երկու մեծ քննարկումներ կազմակերպել:

Այս ընթացքում տպագրվեց նաև Է. Շթիրիի՝ ԳՀԸ-ի քառորդարյա պատմությունն ամփոփող «Գերմանա-հայկական ընկերության պատմության մասին (1914-1939 թթ.)» (“Zur Geschichte der Deutsch-Armenischen Gesellschaft (1914-1939)”) հոդվածը, որի ավարտական մասում հեղինակը, ներկայացնելով իր գնահատականը անցած 25 տարիների ընթացքում իրենց իրականացրած աշխատանքների վերաբերյալ, նշում էր, որ ԳՀԸ-ի հիմնադրման ժամանակ ունեցած «ծաղկուն երազանքներից» իրենք ոչ բոլորն են կարողացել իրականացնել, բայց Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և հետպատերազմյան դժվարին ժամանակներում իրենց աշխատանքը, չնայած սահմանափակ ծավալներին, անարդյունք չի եղել:

¹ Տե՛ս **Schäfer R.**, Aus der Deutsch-Armenischen Gesellschaft // MDAG, 1939, April, n° 4, S. 15 (63):

² Տե՛ս **Schäfer R.**, Aus der Deutsch-Armenischen Gesellschaft // MDAG, 1940, Mai, n° 7-8, S. 20 (108):

³ Տե՛ս նույն տեղում, էջ (109) 21:

⁴ Տե՛ս **Schäfer R.**, Aus der Deutsch-Armenischen Gesellschaft // MDAG, 1939, April, n° 4, S. 15 (63):

Ինչպես տեսնում ենք, ԳՀԸ-ի վարչությունը հաջողությամբ շարունակում էր կազմակերպական աշխատանքները: Սակայն պատերազմի բռնկումը զգալիորեն սահմանափակեց ընկերության գործունեության շրջանակները: Ստեղծված նոր իրավիճակում, նկատի ունենալով Բեռլինից դուրս բնակվող ԳՀԸ-ի անդամների, ինչպես նաև երկրի վարչական մարմինների հետ համագործակցության անհնարինությունը, հոկտեմբերի 7-ին վարչությունը որոշեց ԳՀԸ-ի 25-ամյա հորելյանին նվիրված միջոցառումը հետաձգել՝ այն ավելի ուշ իրականացնելու հույսով: Հատկանշական է, որ հանձնաժողովը չցրվեց¹:

Այսպիսով, 1930-ական թթ. ԳՀԸ-ն շարունակում էր իր աջակցությունը գերմանա-հայկական մշակութային հարաբերություններին, քայլեր էին ձեռնարկվում դրանց խորացման ուղղությամբ: Այսուամենայնիվ, այդ տարիներին հայ ժողովրդին նրա մատուցած ամենամեծ ծառայությունը ազգայնական-սոցիալիստների իշխանության գալով Գերմանիայում ծավալում ստացած ու հետզհետե սաստկացող հակահայ շարժումն իր բնի մեջ խեղդելն ու հայությանը նոր հնարավոր ցեղասպանության վտանգից ազատելն էր:

Հրանուշ Սահակյան – Գերմանա-հայկական ընկերության հայանպաստ գործունեությունը 1933-1939 թթ.

Գերմանա-հայկական ընկերության երախտիքը մեծ է Գերմանիայում նացիոնալ-սոցիալիստական վարչակարգի տարիներին հայ ժողովրդի դեմ ուղղված մարտահրավերների դեմ պայքարում: Խոսքն առնչվում է մասնավորապես 1933 թ. գերմանական լրատվամիջոցներում շրջանառության մեջ դրված՝ հայերի և հրեաների ռասայական նույնականության տեսակետին, որը հղի էր անկանխատեսելի հետևանքներով, և որի դեմ պայքարը դարձավ Գերմանա-հայկական ընկերության և հայ ժողովրդի մյուս գերմանացի բարեկամների գերխնդիրը: Ամիսներ տևած գրապայքարը, որը ծավալվեց նրանց կողմից, ի վերջո հասավ իր ցանկալի նպատակին. գերմանական լրատվամիջոցներում հայերի և հրեաների ռասայական նույնացմանը միտող քարոզարշավը դադարեց: Նոր կեղծիքներից ու նենգափոխումներից խուսափելու նպատակով ընկերությունը 1934 թ. տպագրեց հայերի արիական ծագման վերաբերյալ «Հայկականություն-արիականություն» ժողովածուն: Հետևյալ տարիներին՝ 1933-1939 թթ., ընկերությունը շարունակում էր նաև աջակցությունը գերմանա-հայկական մշակութային կապերի զարգացմանը:

¹ St' u Schäfer R., Aus der Deutsch-Armenischen Gesellschaft // MDAG, 1939, Dezember, n° 5-6, S. 23 (87):

Грануш Саакян – Деятельность Германо-армянского общества, направленная на благо армян, в 1933-1939 гг.

Ключовые слова – Немецко-армянское общество, национал-социалист, Адольф Гитлер, раса, еврей, ариец, П. Рорбах, А. Абемян, Е. Штир, Р. Шефер, генеральная ассамблея, семитские народы, П. Фрунджян, «Армянство-Арийство»

Велика признательность Германо-армянскому обществу за помощь в борьбе с вызовами, направленными против армянского народа в годы национал-социалистического режима Германии. Речь идет, в частности, о введенной в оборот в 1933 г. в немецких СМИ идее о расовой идентичности армян и евреев. Идея эта была чревата непредсказуемыми последствиями, и борьба с ней стала сверхзадачей для Германо-армянского общества и других немецких друзей армянского народа. Развернувшаяся с их стороны борьба пера в конце концов достигла желанного результата: в немецких СМИ прекратилась пропаганда идеи о расовой идентичности армян и евреев. Во избежание новых фальсификаций в 1934 г. общество издало сборник об арийском происхождении армян «Армянство-арийство». В 1933-1939 гг. общество продолжило также способствовать развитию немецко-армянских культурных связей.

Hranush Sahakyan – Pro-Armenian Activities of the German-Armenian Society in 1933-1939

Key Words – German-Armenian Societi, National Socialist, Adolf Hitler, race, Jew, Aryan, P. Rohrbach, A. Abeghyan, E. Stier, R. Schäfer, General Assembly, Semitic peoples, P. Frunjan, “Armeniertum-Ariertum”

The German-Armenian Society played a great role in helping the Armenian people to overcome the challenges during the years of the National Socialist regime in Germany. This refers in particular to the racial identity of Armenians and Jews circulated in the German media in 1933. This was fraught with unpredictable consequences, and the struggle against it became the priority of the German-Armenian Society and other German friends of the Armenian people. The struggle, which had lasted for months, finally reached its desired goal. The German media campaign aimed at the racial identification of Armenians and Jews came to an end. In order to avoid new falsifications, in 1934 the German-Armenian Society published the collection of works “Armeniertum-Ariertum” on the Aryan origin of Armenians. In the following years, from 1933 to 1939, the German-Armenian Society continued to support the development of German-Armenian cultural ties.

Ներկայացվել է 15.09.2020

Գրախոսվել է 09.01.2021

Ընդունվել է տպագրության 14.04.2021